13.qxd 21/06/2026 17:53 Page 1

ԳԵՂԱՄԱ ՏԱՐԱԾՔ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 19 հունիսի 2026թ. թիվ 13 (641)

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հունիսի 14-ի արտահերթ նիստում, Աժ 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ 2503990: Քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում ընտրողների ընդհանուր թիվը՝ 1237 :

Շրջիկ արկղով քվեարկող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընտրողների ընդհանուր թիվը՝ 1300:

Էլեկտրոնային եղանակով քվեարկության մասնակցած ընտրողների թիվը՝ 410:

Ընտրողների ընդհանուր թիվը՝ 2506826:

Քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1476769:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշների ընդհանուր թիվը՝ 260510:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝ 204000:

Ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1470790:

Ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը՝ 2298:

Ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը՝ 1473088:

Չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը՝202121:

Չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը՝1127734:

Անվավեր քվեաթերթիկների թիվը՝16210:

Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ստացած քվեները՝

ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝1425

«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝21181

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ ՝ 340006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝30642

«ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝25551

«ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝33537

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝58287

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝5481

ՔՈՉԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱԶԳԻ ՁԱՐԹՈՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝1986

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝3143

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝15808

ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝2671

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝5269

ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝25758

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝726819

ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ կազմում՝«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱԶԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝144983

ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԵ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝6754

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝7439

Անճշտությունների գումարային չափը՝4331:

ԿԸՀ-ն ԲՀԿ-ի դիմաց հաշվեց 3.893 տոկոսը՝ փաստացի նշելով, որ այն չի մտնում Աժ: Իսկ , համաձայն ԿԸՀ ամփոփիչ արդյունքների, Աժ մտնում են քաղաքական 3 ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ տրված ընդհանուր քվեների 49,745 տոկոսով, «Ուժեղ Հայաստան»՝դաշինքը՝ 23,271 տոկոսով եւ «Հայաստան» դաշինքը՝ 9,923 տոկոսով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Սիրելի՛ գեղարքունիքցիներ, սիրելի՛ հայրենակիցներ

Այսօր ցանկանում եմ ասել ընդամենը մեկ բառ՝ շնորհակալություն:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր իրենց քվեով, վստահությամբ եւ աջակցությամբ տեր կանգնեցին Հայաստանի Հանրապետությանը, նրա անկախությանը, պետականությանը եւ խաղաղ ապագային:

Այս արդյունքը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության հպարտ, արժանապատիվ եւ պետականատեր քաղաքացին գիտակցում է իր պատասխանատվությունը պետության հանդեպ եւ իր ընտրությամբ մասնակցում է երկրի ապագայի կերտմանը:

Սա վստահության քվե էր հանուն խաղաղության, կայունության եւ զարգացման:

Այս հաղթանակը պարտավորեցնող է: Այն մեզ կոչ է անում՝ ավելի մեծ պատասխանատվությամբ աշխատել, ավելի հետեւողական լինել եւ շարունակել ծառայել մեր պետությանն ու ժողովրդին:

Առաջ՝ դեպի նոր հաջողություններ, ավելի ուժեղ համայնքներ եւ ավելի հզոր Հայաստան:

Փառք մեր նահատակներին, եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ԳԹԱՇԵՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ԳԵՂԱՏԵՍԻԼ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Գթաշեն գյուղի ավերակները տարածվում են Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս, Լճավան եւ Կարճաղբյուր գյուղերի արանքում, Մաքենիսից 4 կիլոմետր դեպի արեւմուտք ընկած հատվածում:

Այս գյուղի ոչ միայն անունն է մոռացված շատ վաղուց, այլ նաեւ տեղանքն է շատերի համար իսպառ անհայտ, քանի որ տների ավերակներն անգամ սովորական աչքի համար հազիվ կարող են նշմարվել: Փոխարենը շատ հստակ ու վեհորեն երեւում են ավերակ եկեղեցու շուրջ սփռված մի քանի տասնյակի հասնող խաչքար-տապանաքարերը, որոնք հանդիսանում են որպես արվեստի հրաշալի կոթողներ ու պատմամշակութային արժեքներ, հայ ժողովրդի ապրած կյանքի ու պատմության լռին, սակայն շատ խոսուն վկաներ:

Գթաշենը շատ մոտ է գտնվում Մաքենիսի հռչակավոր վանքին, որը եղել է միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր հոգեւոր ու կրթական կենտրոններից մեկը: Այն հեռու չէ նաեւ մեկ այլ հայտնի հոգեւոր կենտրոններից մեկից՝ Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղում գտնվող Վանեվան վանական համալիրից:

Դժվար է նաեւ եզրակացնել, թե որ դարաշրջանից է սկսվել Գթաշենի պատմությունը, քանի որ ողջ տարածքը, բնակիչների կողմից վերջնականորեն լքվելուց հետո, 17-18-րդ դարերի ընթացքում, ամբողջովին վերածվել է արտերի ու խոտհարքերի: Իսկ որ ամենագլխավորն է, այստեղ մինչ օրս չի արվել հնագիտական որեւէ ուսումնասիրություն, որով կարող էր հաստատվել այս գյուղի սկզբնավորման հստակ ժամանակագրությունը:

Մի բան է միայն հաստատ, որ Գթաշենը տեղավորված է պատմական այնպիսի տարածքում, ուր անհիշելի ժամանակներից բնակվել են մարդիկ՝ զարգացնելով անասնապահությունը, երկրագործությունը, մետաղամշակումը, արհեստները:

Գթաշենը մոտ է գտնվում նաեւ Ծովակի Կիկլոպյան հզոր ամրոցին, որտեղ ժամանակին արձանագրություն է թողել Ուրարտուի արքա Սարդուր Երկրորդը: Այն շատ մոտ է տեղակայված նաեւ Կարճաղբյուրի «Քարե Դուռ» կիկլոպյան ամրոցին, որը կառուցվել է Ք.Ա. 2-րդ հազարամյակի վերջում: Ծովինարի Օձաբերդը եւս, որը կառուցվել կամ վերակառուցվել է Ուրարտուի արքա Ռուսա Առաջինի կողմից, ընդամենը մի քանի կիլոմետր է հեռու տեղակայված Գթաշենից

/շարունակությունը՝ էջ 3-ում/

13.qxd 21/06/2026 17:53 Page 2

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԻ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԸ ՏՊԱՎՈՐՎԱԾ ԵՆ ՀԵՌԱՑԵԼ ԶՈԼԱՔԱՐ ԳՅՈՒՂԻՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար գյուղն վերջերս հյուրընկալել է արտասահմանյան 11 երկրներ ներկայացնող զբոսաշրջիկների, ովքեր բավականին հագեցած օր են անցկացրել Զոլաքարի պատմամշակութային հուշարձանների տարածքներում, կրթամշակութային օջախներում, ինչպես նաեւ՝ «Իրիցու տուն» հացատուն-թանգարանում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, զբոսաշրջիկների այցի նպատակն էր՝ ծանոթանալ Մարտունի համայնքի ազգային մշակույթին:

Նրանց առավել տպավորել է «Իրիցու տուն» հացատուն-թանգարանը, որտեղ պահվում են մի քանի դարի վաղեմության գյուղատնտեսական գործիքներ ու կենցաղային իրեր, հազարաշեն տուն, թոնիր, ձիթահանի քար, մշակութային այլ արժեքներ, որոնք հյուրերին ներկայացրել է հացատուն-թանգարանի տնօրեն, պարուսույց, Զոլաքարի մշակույթի կենտրոնի աշխատակից Մխիթար Հարությունյանը:

Այնուհետ Զոլաքարի մշակույթի կենտրոնում Մխիթար Հարությունյանի կողմից անցկացվել է վարպետաց դաս՝ հայ ազգային պարերի ցուցադրմամբ:

-Զբոսաշրջիկները, ոգեւորված բնակիչների ջերմ ընդունելությունից ու պարախմբերի, դհոլահարների ելույթներից, սովորել են պարել զոլաքարցիներին հարազատ «Ալաշկերտի Քոչարին»: Նրանք հետեւում էին պարուսույցի հրահանգներին եւ փորձում յուրացնել հայկական պարի ռիթմերն ու շարժումները,-ներկայացրեց Մխիթար Հարությունյանը:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՎԱՀԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան գյուղի միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, 2026 թվականի մայիսի 20-ից:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Վահանի միջնակարգ դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 320 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է դպրոցի շենքի տանիքի, հատակի, աստիճանների, մարզադահլիճի եւ նիստերի դահլիճի վերանորոգում՝ ջեռուցման համակարգի անցկացմամբ, նոր պատուհանների եւ դռների տեղադրում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, դպրոցի բակային տարածքի ասֆալտապատում, նոր ֆուտբոլի դաշտի կառուցում ու ցանկապատում, սանհանգույցների, էներգամատակարարման համակարգի նորացում, այլ աշխատանքներ: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

-Մեր դպրոցի շենքը մասնակիորեն նորոգվել է 2005-2006 թվականներին, սակայն արմատական լուծում չի տրվել վերանորոգման հետ կապված շատ խնդիրների: Այս ծրագրով մեր դպրոցը վերջապես կունենա արդի չափորոշիչներչին համապատասխանող բոլոր պայմանները, հիմնովին կփոխվի կրթական միջավայրը, կավելանա ուսման հանդեպ ձգտումը, սահմանամերձ մեր գյուղում մարդիկ ավելի հույսով ու ավելի ամուր կկապվեն իրենց հարազատ բնօրրանին,-նշեց Վահանի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիանա Մարտիրոսյանը:

2025-2026 ուստարում Վահանի միջնակարգ դպրոց է հաճախել 115 աշակերտ:

«Գեղամա աշխարհ»

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԹՈՒՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ-2026» ԾՐԱԳՐՈՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿ ԵՎ ԶԲՈՍԱՅԳԻ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Թթուջուր բնակավայրում «Մասնակցային բյուջետավորում-2026» ծրագրի շրջանակներում կկառուցվի բազմաֆունկցիոնալ մարզահրապարակ, զբոսայգի եւ բացօթյա բեմ:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Թթուջուր գյուղի բազմաֆունկիոնալ մարզահրապարակի եւ զբոսայգու կառուցման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 60 միլիոն դրամ, որից 30 միլիոն դրամը հատկացնելու է ՀՀ կառավարությունը, 30 միլիոն դրամը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Բազմաֆունկիոնալ մարզահրապարակը եւ զբոսայգին կառուցվելու են Թթուջրի կենտրոնական հատվածում, նախկին մշակույթի տան դիմացի տարածքում:

Ծրագրի իրականացման արդյունքում Թթուջրի երեխաները կունենան ժամանակակից մարզահրապարակ, մարզվելու, ժամանցի ու միջոցառումների անցկացման հնարավորություն:

-Այժմ նախագիծը գտնվում է փորձաքննության փուլում, որի ավարտից հետո, ամենայն հավանականությամբ այս ամսի ընթացքում, կհայտարարվի շինարարության մրցույթ, որի արդյունքների ամփոփումից հետո կտրվի շինարարական աշխատանքների մեկնարկը,-տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 8 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 8 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 928 միլիոն 510 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 6-ը սուբվենցիոն են՝ 194 միլիոն 754 հազար դրամ ընդհանուր արժեքով, 2-ը՝ պետական՝ 1 միլիարդ 733 միլիոն 756 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Փոքր Մասրիկում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 12300 մետր խմելու ջրի ներքին ու արտաքին ցանց, 2600 մետր ոռոգման ցանց, 1500 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել խմելու ջրի կարգավորիչ ջրամբարը, 1 խորքային հոր, 4200 մետր հանրապետական ու ներհամայնքային նշանակության ճանապարհ, ընթացքի մեջ են կրթահամալիրի կառուցման աշխատանքները:

Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհի Փոքր Մասրիկի հատվածը, 4300 գծամետր երկարությամբ, միջին նորոգման է ենթարկվել պետական ծրագրի շրջանակներում, 2025 թվականին, շուրջ 200 միլիոն դրամ արժեքով:

Փոքր Մասրիկի կրթահամալիրը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, 1 միլիարդ 533 միլիոն 756 հազար դրամ արժեքով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերից եւ 2026 թվականի հունիսի 9-ի դրությամբ իրականացվել շուրջ 60 տոկոսով: Կրթահամալիրի շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի սեպտեմբեր ամսին:

«Գեղամա աշխարհ»

ՇԱՏՋՐԵՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 10 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատջրեք գյուղում սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 10 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 907 միլիոն 150 հազար 634 դրամ:

Իրականացված ծրագրերից 9-ը սուբվենցիոն են՝ 259 միլիոն 493 հազար դրամ ընդհանուր արժեքով, 1-ը՝ պետական՝ 647 միլիոն 700 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Շատջրեքում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 2876 մետր խմելու, 5079 մետր ոռոգման ջրատար ցանցեր, 2020 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել 962 գծամետր ներհամայնքային նշանակության ճանապարհ, ընթացքի մեջ են դպրոցի շենքի կառուցման աշխատանքները:

Շատջրեքի դպրոցի շենքը կառուցվում է պետբյուջեի միջոցներով, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021 թվականից, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, 647 միլիոն 700 հազար դրամ արժեքով: 2026 թվականի հունիսի 1-ի դրությամբ շինարարությունն իրականացված է շուրջ 70 տոկոսով: Շինարարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի սեպտեմբերին:

«Գեղամա աշխարհ»

13.qxd 21/06/2026 17:53 Page 3



/սկիզբը՝ էջ 1-ում/

Գթաշենի կողքով հոսում է Մաքենիս գետը, իսկ հարավային կողմում տարածվող Վարդենիսի բարձրաբերձ լեռնաշքայից բխում են հորդահոս, սառնորակ աղբյուրներ, տարածվում են ընդարձակ արոտավայրերն ու խոտհարքերը, որոնք չափազանց նպաստավոր են եղել մարդկանց բնակվելու ու զբաղմունքի համար:

Այս գյուղի պատմությանն ու պատմամշակութային արժեքներն մանրամասնորեն անդրադարձել է մեծ հայագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը «Դիվան հայ վիմագրության» կոթողային աշխատության մեջ: Դրա համար հիմք են ծառայել միայն հրաշքով պահպանված ու մեզ հասած տապանաքար-խաչքարերը, որոնք արտացոլում են ընդամենը 15-17-րդ դարերի ընթացքը, այստեղ ապրած մարդկանց անունները եւ թողած արվեստի քանդակներն ու վիմագրերը: Իսկ թե ինչ հանգամանքներում են հայ բնակիչները լքել գյուղը, որտեղ են հեռացել, այս մասին առայժմ պատմությունը խորհրդավոր կերպով լռում է:

Ամենայն հավանականությամբ, գյուղը լքվել է 18-րդ դարի ընթացքում լեզգիների կողմից Սեւանի ավազանում իրականացված մի քանի ավերիչ ասպատակությունների հետեւանքով:

Դատելով ավերակների ընդարձակ տարածվածությունից, կարելի է եզրակացնել, որ Գթաշենը ժամանակին եղել է մեծ ու մարդաշատ գյուղ:

Այժմ խոսքը տանք Սեդրակ Բարխուդարյանին: «Գթաշեն գյուղատեղի այս ավերակները գտնվում են Մաքենիս գյուղից արեւմուտք, 3-4 կիլոմետր հեռու, բայց նրա հանդի մեջ, Կարճաղբյուր գյուղի հանդի սահմանի մոտ, գետակի ձախ ափին: Տեղացիները կոչում են «Կարմիր խրբէք», որի ավերակների մեծ մասն արդեն մաքրված է եւ տեղն արտերի վերածված: Պահպանվել են անտաշ քարերով շինված եկեղեցու հիմնապատերը՝ մեջը երկու կանգնած խաչքարեր եւ անմիջական շրջապատում՝ մի քանի տների ավերակներ, խաչքարեր ու գերեզմանաքարեր՝ եկեղեցու մոտ:

Եկեղեցու մեջ կանգնած մի գեղաքանդակ խաչքարի թիկունքի մեծ եւ բովանդակալից արձանագրության մեջ պահպանվել է գյուղի հին անունը՝ Գթաշեն: Գթաշեն անունով գյուղ չկա Օրբելյանի ցուցակում: Ալիշանը նշում է, որ Վենետիկում պահվող պատմագրի ձեռագրերից ոչ մեկում չկա, սակայն Շահխաթունյանցը իր մեջ բերած Սոթք գավառի ցուցակում նշում է Քթաշեն գյուղը:

Մեզ թվում է, որ Շահխաթունյանցը ցուցակի վերջում մի քանի գյուղերի անունները լրացրել է առնելով այլ աղբյուրներից, եւ ոչ թե Օրբելյանի որեւէ ձեռագրի ցուցակից, մանավանդ, որ Շահխաթունյանցի ցուցակում Քթաշենին անմիջապես հաջորդում է Դէլիղարդաշ անունը, որը նախ Սոթք գավառի մեջ չէ, եւ ապա, իր թուրքական ծագումով, չէր կարող լինել Ստեփանոս Օրբելյանի ցուցակում:

Շահխաթունյանցի աղբյուրն այս դեպքում եղել են Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մի քանի ձեռագրերը: Հատկապես Տաթեւի վանքում գրված օրինակներում Քյոթուկի դեր է կատարել մի օրինակ, որտեղ զետեղված է եղել Գեղարքունիի մելիքների եւ տանուտերերի հայտնի «Ուխտագիրը», որը տվել են Տաթեւի վանքին, որպես հաստատություն՝ Գեղարքունի գավառը ադ վանքի վիճակ լինելուն: Շահխաթունյանցը 1513 թվականի այդ «Ուխտագիրն» ամբողջությամբ դրել է իր գրքում, որի տակ, ի շարս այլոց, ստորագրել է նաեւ Թարխան Քիթաշենցին, այն էլ՝ Էիէ Դէլուղարդաշյանից հետո:

Այսպիսով, Քիթաշեն տեղանվան ամենահին հիշատակությունը վերաբերում է 1513 թվականին: Մեր արձանագրությունը թվական չունի, բայց այն խաչքարը, որի թիկունքին գրված է, իր քանդակների ոճով հենց այդ ժամանակներին է վերաբերում: Ավերակների մեջ եղած հուշարձանների մեծ մասը թվագրված են արձանագրության մոտիկ ժամանակներով: «Ուխտագրի» մեջ Քիթաշենի փոխարեն Գթաշեն ձեւը առարկության տեղիք տալ չի կարող հարկավ:

Անհրաժեշտ է մի ուղղում: Երվանդ Լալայանը հրատարակել է այս արձանագրությունը, բայց սխալմամբ տեղադրել է Վերին Քյոլաղռան գյուղատեղում, որին նույնպես սխալմամբ «Կարմիր խարապա» անունն է տվել, ապա, արձանագրությունը սխալ վերծանելով՝ աղավաղել է թե՛ նրա ընդհանուր բովանդակությունը, թե՛ , մանավանդ, Գթաշեն տեղանունը: Մեզ հետաքրքրող մասը Լալայանը վերծանել է այսպես.«...սարընդհանայ արեւի սարին ջուրն Դաղձն գթայշինոյ...»: Բացի ընդհանուր իմաստից զուրկ լինելուց, այս բառերի շարքի մեջ գյուղանունը դարձել է Դաղձն. իրականում այս մասն այսպես է. «Սարդահանայ պռի սարին ջուրն ի դաշտն Գթայշինոյ...»:

Այս գյուղատեղից մեր ժողովածուում ամփոփված են 15 արձանագրություն, որոնցից միայ երկուսն են հատարակված եղել»,-գրում է Բարխուդարյանը:

Եվ այսպես, ի՞նչ է գրված ավերակ եկեղեցու մեջ կանգնած մեծ, գեղաքանդակ խաչքարի ճակատին, թիկունքին եւ հարավային կողին. «ԱՍՏՈՒԾՈՎ ՄԵՔ ԴԱՒԻԹ ԷՐԷՑՍ :Ե: /5/ ՈՐԴԻՔՍ, ՍՈՒԼԹԱՆՂՈՒԼԻՆ, ԵՂԻՇԻՍ ԹՈՌՆ ՂԱԼԱՄԻՆ, ՈՐ ԵՆՔ ԾՆՈՒՆԴ ՍԱՐՈՒ ԱՄԻՐՃԱՆԻՆ, ՈՐ ԲԱՁՈՒՄ ՁԱՆՔ ԵՒ ՀՆԱՐԻՒՔ ԲԵՐԵԱԼ ՍԱՐԴԱՀՆԱՅ ՊՈՒ ՁՈՒՐՆ Ի ԴԱՇՏՆ ԳԹԱՅՇԻՆՈՅ. ՇԻՆԵԱՑ :Բ: /2/ ՁԱՂԱՑՆ , ԵԹՈՂ ՀԱՐԵՆԻՔ ԻՒՐ ԾՆԸՆԵՈՑ»:

Խաչքարի հարավային կողին գրված է. «ԴԱՒԻԹ ԷՐԷՑ ԿԱՆԿՆԵՑԱՔ ԽԱՉԵՐՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՄԵՐ»:

Խաչքարն անթվագիր է, սակայն Բարխուդարյանն այն համարում է 15-16-րդ դարերի գործ: Ըստ նրա՝ հենց այդ ժամանակներում են պատրաստվել նաեւ թվագրություն կրող մյուս խաչքարերն ու տապանաքարերը:

Վավերագրից պարզ հասկացվում է, որ Դավիթ Երեցը, Սուլթանղուլի 5 որդիները, Ղալամի թոռ Եղիշը բազում ջանքերով ու հնարներով ջուրը հասցրել են Գթաշենի դաշտերը, ջրի հոսքի վրա երկու ջրաղաց շինել:

Ահա այսպես է պահպանվել թե՛ գյուղի, թե՛ նրան շունչ ու կենդանություն տվող մարդկանց անունները, որոնք դարերով դաջված են մնացել բնության բոլոր քմայքներին դիմացած գեղաքանդակ խաչքարի վրա:

Նույն խաչքարին կից, ավերակ եկեղեցու մեջ կանգնած մեկ այլ խաչքար կրում է հետեւյալ արձանագրությունը. «ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍԱԼԹԱՆՂՈՒԼԻՆ»: Նույն խաչքարը նախորդի հետ կանգնեցրել է Դավիթ Երեցը:

Մեծ ու տափակ տապանաքարին արձանագրված է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱՆԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՄԻՐԶԻՆ.ԹՎ. ՌՆԻ /1671/: Սա արդեն փաստում է, որ Գթաշենում 17-րդ դարի երկրորդ կեսին հայ մարդիկ շարունակում էին ապրել ու արարել, չնայած Շահ Աբասի կողմից կազմակերպած 1604-1605 թվականների մեծ բռնագաղթին ու նրան հաջորդած ծանր ժամանակներին:

Շատ տպավորող են ավերակ եկեղեցու արեւմտյան պատին մոտ մի շարքով կանգնեցված գեղաքանդակ 7 խաչքարերը, որոնցից հինգը միայն կրում են թվական արտահայտող տառերը՝ ՁԼԶ/1487/, ՁԿԵ/1516/, ՁԿ/1511/, Ձ Կ / 1 5 1 1 / , ՁԿԵ/1516/: Իսկ նրանցից մեկը, ամենահարավային կողմում, հետեւյալ արձանագրությունը. «ԵՍ ՏԵՐ ՄԱՆՎԵԼ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՆ ՀՈԳՈՅ ՀԱՒՐ ԻՄ ՊԷԽԱՆԻՆ.ԹՎ. ՁԿԷ/1516/: Բոլոր խաչքարերը գեղաքանդակ են ու նույն ոճի, նույն վարպետի կողմից կերտված:



Ավերակ եկեղեցու մոտ գտնվող մի տապանաքար էլ ազդարարում է 1496 թվականին մահացած Ղալամի անունը:

Մի ամբողջ պատկերասրահի ու գրավոր մատյանի է նմանվում մեծ, ստորին մասում օրորոցաձեւ, վերին մասում թամբաձեւ տապանաքարը, որը հարավային կողին ունի չորս սրանկյուն խորաններ: Առաջին խորանում ձիավոր է պատկերված՝ ձեռքին գավազան, երկրորդ խորանում երկլարանի սազ նվագողն է, երրորդում պատկերված է գավ եւ բլիթ, չորրորդում՝ մկրատ, ցրցամ տալու կեռ գործիք, երկար փայտ եւ կոճակ: Շրջանակների մեջ արձանարված է. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՂՈՒԿԱՍԻՆ Է ՈՐԴԻ ՍԻՄԵՈՆԻՆ, ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ ՁԵՌԱՒ ՓԻՐՃԱՆԻՆ :ՁՀ:/1521/ ԱՂԱՊԷԿ»: Բարխուդարյանը կարծում է, որ Աղաբեկը կազմողն է, քանի որ նրա անունը գրված է հյուսիսասային կողմի մի խորանի մեջ:

Հետաքրքիր պատկերազարդում ունի նաեւ վերեւում թամբաձեւ, հյուսիսային կողը 2 շարքի բաժանված, վերեւում չորս խորաններ , իսկ երեքի մեջ խաչեր ունեցող տապանաքարը: Վերին մասում պատկերված է գավ եւ բլիթ, երկու կողերին՝ երկլարանի սազ եւ սրինգ: Ստորին շարքում պատկերված է հեծյալ, որը նիզակով հարվածում է ձիու ոտքերի տակ գալարված վիշապին: Դիմացը պատկերած է եզ ու մի գազան: Տապանաքարը կրում է հետեւյալ արձանագրությունը.

«ՊԵՏՐՈՍ, ՈՐԴԻ ԱԹԱՆԻՍԻ ԿԱՆԳՆԵՑԻ ՁՏԱՊԱՆՍ ԻՄ ԵՂԲԱՒՐ...ԹՎ. ՁՁԲ/1533/»:

Մեկ այլ տապանաքրի վրա էլ պատկերված է ձեռքին նետ ու աղեղ բռնած որսորդ, ուսին՝ հրացան, գոտիում՝ դաշույն, իսկ նրա առջեւից փախչող երեք այծյամ: Տապանաքարին արձանագրված է. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԴԱՒԹԻՆ»: Քանդակը համարվում է 16-րդ դարի գործ:

Սքանչելի է նաեւ մեկ այլ տապանաքրարի քանդակը, որի վրա հարավային կողմի չորս խորաններից առաջինի մեջ պատկերված է հեծյալ՝ ձեռքին գուրզ, երկրորդի՝ մեջ՝ գավ եւ հաց, երրորդի մեջ՝ ձեռքերը կանթած մարդ, չորրորդի մեջ՝ արոր, դիմացը՝ դաշույն եւ հրացան: Տապանաքարին արձանագրված է. «ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԷԼԻԽԱՆԻՆ Է ՈՐԴԻ ՍԱՐՈՒԽԱՆԻՆ ԵՒ ՄԱՐՆ ՄԱՐԻԱՆԻՆ: ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՀՈԳՈՅՆ ԷԼԻԽԱՆԻՆ ԵՒ ՄՈՐՆ ՄԱՐԻԱՆԻՆ. ԹՎ ՌՂԳ/1645/»:

Մեկ այլ տապանաքար էլ կրում է Աղաճան անունը:

Գթաշենը չորս կողմից շրջապատված է սքանչելի բնապատկերներով: Հյուսիսում, ինչպես ափիդ մեջ, փռված է Սեւանա լճի ողջ հայելին ու նրան շրջապատող լեռնաշքաները: Արեւմուտքում տարածվում է Գեղամա լեռնաշղթան՝ իր բարձրաբերձ բազմաթիվ կատարներով: Արեւելքում Արեւելյան Սեւանի լեռներն են, հարավում՝ Վարդենիսի լեռնաշղթայի սարալանջերը: Իսկ այս ամենին առանձնակի շուք են տալիս խաչքար-տապանաքարերը, որոնք մեզ ավանդվել են մեր հանճարեղ քանդակագործ վարպետների պայծառ մտքի ու հմուտ ձեռքերի շնորհիվ:

Հայ մարդիկ այստեղ ապրել ու արարել են խստաշունչ ձմեռների ու զովասուն ամառների դժվար ու նույնքան էլ հաճելի ներկայությամբ, սակայն միշտ հույսով, հավատով, մայր հողի նկատմամբ ունեցած սիրով, Աստծուն ուղղված ջերմեռանդ աղոթքներով: Բայց եկել են չարագործ, ավարառու ցեղերը եւ եռուզեռի մեջ ապրող շենը հիմնովին ամայացրել:

Ու Գթաշենը, թեկուզ վաղուց լքված ու մոռացված, ուխտի է կանչում մեզ, ուխտի է կանչում աշխարհասփյուռ հայությանը՝ ավերակների մեջ դեռ հպարտորեն կանգնած իր վեհաշուք կոթողներով, իր առեղծվածային պատմությամբ:

Մաքենիսի վանք այցելող ուխտավորները կարող են իրենց համար պարտավորություն համարել՝ մի կարճ ժամանակով ճանապարհը շեղելու եւ Գթաշենի հուշարձաններին իրենց սիրո ու հարգանքի տուրքը մատուցելու նպատակով:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 7 ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՁԵՌՔ ԲԵՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԲՆԱԿՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մարտունի քաղաքի 7 ընտանիքներ նվիրատվությամբ սեփականության իրավունք ձեռք բերեցին իրենց վարձակալած բնակտարածքների նկատմամբ:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, նրանք Մարտունի քաղաքի Շահումյան փողոցի 15/1 շենքի այն բնակիչներն են, ովքեր երկար տարիներ վարձակալությամբ բնակվելով նախկին շրջսանէպիդկայանին պատկանող տարածքում, իրավական տարբեր խոչընդոտների պատճառով չէին կարողանում օրինականացնել ու սեփականաշնորհել իրենց անշարժ գույքը: Սակայն այդ երկարատեւ սպասումն ու անորոշությունն արդեն մնացել են անցյալում:

Օրերս Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը համայնքապետարան էր հրավիրել հիշյալ շենքի բնակիչներին՝ անձամբ հայտնելու երկար սպասված ուրախալի լուրը: Համայնքի ղեկավարը շնորհավորել է ներկաներին եւ նրանց հանձնել համապատասխան որոշումները, որոնցով շենքի թվով 7 բնակարանները նվիրատվությամբ հատկացվել են այդ բնակարանները տասնամյակներ շարունակ վարձակալող 7 ընտանիքներին:

-Տարիների խնդրի հանգուցալուծումը ոչ միայն իրավական ակտերի հստակեցում է, այլեւ մարդասիրական ու արդարացի քայլ՝ ուղղված մեր համայնքի բնակիչների կյանքի որակի բարելավմանն ու նրանց սեփականության իրավունքի պաշտպանությանը,-

13.qxd 21/06/2026 17:53 Page 4

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂՈՒՄ 2028-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 9 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 9 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 641 միլիոն 233 հազար 951 դրամ:

Իրականացված ծրագրերից 8-ը սուբվենցիոն են՝ 191 միլիոն 233 հազար 951 դրամ ընդհանուր արժեքով, եւ մեկը՝ պետական՝ 450 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականներին Գեղարքունիք գյուղում կառուցվել է 8490 մետր խմելու ջրատար, 7749 մետր արտաքին լուսավորության ցանց, մանկական խաղահրապարակ, Գավառի պատմության ու բնության հուշարձանների գովազդային վահանակներ կրող ավտոսպասարկման կանգառ, 2152 մետր ջրահեռացման համակարգ, 3064 քառակուսի մետր ասֆալտապատ մայթեր, հիմնանորոգվել 2272 մետր ներհամայնքային ու մարզային նշանակության ճանապարհի, մշակույթի տան տարածքում հիմնվել մանկապարտեզ:

Պետական ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է Գավառ-Գեղարքունիք մարզային նշանակության ավտոճանապարհի Գեղարքունիքի հատվածը՝ 450 միլիոն դրամ արժեքով:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՄԱՍԱՐՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Գեղամասար գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 6 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 903 միլիոն 209 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 4-ը սուբվենցիոն են՝ 88 միլիոն 109 հազար դրամ ընդհանուր արժեքով, 2-ը՝ պետական՝ 815 միլիոն 100 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Գեղամասարում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 10374 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 3440 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել հանրապետական ու ներհամայնքայի նշանակության 5300 գծամետր ճանապարհ, ավարտական փուլում է գտնվում արդի չափորոշիչներին համապատասխանող մանկապարտեզի կառուցումը:

Գեղամասարի 50 տեղանոց մանկապարտեզի շենքը կառուցվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող ,300 դպրոց, 500 մանկապարտեզ ծրագրի շրջանակներում, պետբյուջեի միջոցներով, 150 միլիոն դրամ պայմանագրային արժեքով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի հուլիսից, իսկ մանկապարտեզը բացվել եւ շահագործվում է 2026 թվականի ապրիլի 29-ից: Բացման արարողությանը մասնակցել է ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Պետական մեկ այլ ծրագրով, 665 միլիոն դրամ պայմանագրային արժեքով, 2024 թվականին հիմնանորոգվել է Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի Արեգունի-Գեղամասար հատվածը:

ԾԱՂԿՈՒՆՔՈՒՄ 208 ԳԼՈՒԽ ՈՉԽԱՐԻ ԱՆԿՄԱՆ ԴԵՊՔԸ ԳԱՅԼԵՐԻ ՀՈՇՈՏՄԱՆ ՀԵՏ ՉԻ ԿԱՊՎՈՒՄ

2026 թվականի հունիսի 6-ի վաղ առավոտյան Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծաղկունք գյուղում գրանցվել է 208 գլուխ ոչխարի անկում, որն առանձին լրատվամիջոցներով ներկայացվել է որպես գայլերի ոհմակի հարձակման ու սպանդի արդյունք, մինչդեռ այլ բան է ասում պաշտոնական ու մասնագիտական կարծիքը:

Ինչպես տեղեկացրեց Սեւանի համայքնապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի վարիչ Ռադիկ Մանուկյանը, անկած 208 գլուխ ոչխարներից եւ ոչ մեկը հոշոտված չի եղել, ոչ մեկի մարմնի վրա ծակված կամ ճանկռված տեղեր չեն նկատվել:

Դեպքն արձանագրվել է Ծաղկունքի բնակիչ Գուրգեն Գեւորգյանի փարախում, որտեղ պահվում են Ծաղկունքի տնտեսությունների հարյուրավոր գլուխ ոչխարները արոտի շրջանում:

-Գուրգեն Գեւորգյանն իր տնտեսության փարախում պահում է իր ու գյուղացիների ոչխարները: Վաղ առավոտյան նա նկատել է, որ ոչխարները կուտակված են իրար վրա, որոնց մի մասը չեն շարժվում: Դժվար է առայժմ եզրակացնել, թե ինչի արդյունքում են սատկել ոչխարները, սակայն մի բան հստակ է, որ գայլերի հարձակման կամ հոշոտման դեպքի հետ դա ոչ մի առնչություն չունի: Եթե ոչխարները կուտակվել են իրար գլխի, ապա ինչ-որ բանից խրտնել են՝ գուցե գայլերի մոտիկ լինելու վախից, հավանական է նաեւ ամպրոպից ու կայծակից: Բոլոր դեպքերում, լուրջ վնաս են կրել Ծաղկունքի ոչխարաբուծական տնտեսությունները, իսկ հովիվը՝ Գուրգեն Գեւորգյանը, նման աղետի հետեւանքով հայտնվել է դժվարին վիճակում: Նա խնամքի տակ ունի չորս անչափահաս երեխա եւ սոցիալապես գտվում է ոչ բարվոք վիճակում:

Անկած ոչխարների միսը պիտանի չէր օգտագործման, որն ամբողջությամբ ոչնչացվել է: Վնասների հնարավոր չափերը ճշտվում են,- ներկայացրեց Ռադիկ Մանուկյանը:

«Գեղամա աշխարհ»

ՅԱՆԿԱՊԱՏՎՈՒՄ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԸ

Օրերս սկսվել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Նորաշեն բնակավայրի խաղահրապարակի ցանկապատման աշխատանքները:

Համայնքի բյուջեից ցանկապատման աշխատանքների իրականացման համար տրամադրվել է 4 միլիոն 800 հազար դրամ:

Ցանկապատի ընդհանուր երկարությունը 90 գծամետր է, տեղադրվելու է նաեւ մետաղական դարպաս:

Ձեռնարկը սպասված էր եւ Նորաշեն բնակավայրի այս տարվա առաջնահերթություն ներկայացնող ծրագրերի ցանկում էր:

Ցանկապատումը հնարավորություն կտա՝ խաղահրապարակը դարձնել անվտանգ՝ ստեղծելով ամբողջական միջավայր: Տեղեկացնենք, որ համայնքի եւ ՅՈՒՆՍԻԵՖ-ի արդյունավետ համագործակցության շնորհիվ Նորաշեն բնակավայրում գործում է նախադպրոցական այլընտրանքային ծառայություն, որը բնակավայրի նախադպրոցական տարիքի երեխաների համար ստեղծել է բարենպաստ միջավայր՝ տարիքին համապատասխան կրթություն եւ դաստիարակություն ստանալու համար:

Նորաշենցի փոքրիկների առօրյան առավել հագեցած դարձնելու համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, տարածքում դեռեւս տարիներ առաջ տեղադրել էր բակային խաղամիջոցներ, որի շնորհիվ ոչ միայն նախակրթարանի, այլ նաեւ բնակավայրի երեխաների ազատ ժամանցն ու առողջ ապրելակերպին միտված միջոցառումները դարձել են առավել հետաքրքիր եւ հագեցած:

Ցանկապատի կառուցումն էլ կատարված աշխատանքների օրգանական շարունակությունն է, որին հանձնառու էր դարձել Սեւանի համայնքապետարանը, եւ որը դառնում է համայնքապահպան կոնկրետ ծրագիր:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՔ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Ելենովկա, Բարեկամություն, Աշոտ Երկաթ փողոցներում ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն տրվել է հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը:

Վերոնշյալ երեք փողոցներն ընդգրկում են 660 գծամետր երկարություն եւ շուրջ 4 հազար քառակուսի մետր մակերես:

Սեւանի Ելենովկա, Բարեկամություն, Աշոտ Երկաթ փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 231 միլիոն 478 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Շինաշխատանքների կապալառու կազմակերպությունը «Ճան Շին» ՍՊԸ-ն է:

Հիմնանորոգման աշխատանքները ներառում են շինարարական մի շարք բաղադրիչներ:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱՐՁՐԱՆԱԼ

2026 թվականի հունիսի 1-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 72 սանտիմետր բարձրության վրա, ինչը 16 սանտիմետրով բարձրացել է այս տարվա մայիսի սկզբին գրանցված նիշից:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի համաձայն, 2025 թվականի հունիսի 1-ին Սեւանա լիճը գտնվել է 1900,75 սանտիմետր բարձրության վրա՝ այս տարվա նիշը գերազանցելով 3 սանտիմետրով: Իսկ այս տարվա սկզբից մինչ հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Սեւանի մակարդակը բարձրացել է 48 սանտիմետրով:

2026 թվականի հունվարից մինչ հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 122 միլիոն 831 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւան թափվող գետերում դիտվում է ջրի ելքերի մեծացում:

13.qxd 21/06/2026 17:53 Page 5

ԾՈՎԱՍԱՐՈՒՄ ՇՈՒԲՈՎ ՆՇՎԵՑ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԺՈՐԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90 ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 70-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար գյուղում հանդիսավորությամբ նշվեց վաստակաշատ ու հանրաճանաչ մանկավարժ, բազմազավակ հայր Ժորա Ստեփանյանի ծննդյան 90 եւ մանկավարժական գործունեության 70-րդ տարեդարձերը:

Ժորա Ստեփանյանի մեծարման ցերեկույթին ներկա էին նախկին աշակերտները, ովքեր արդեն վաղուց անվանի ուսուցիչներ են, դասախոսներ, գիտությունների թեկնածուներ, բժիշկներ, դոցենտներ: Ցերեկույթին իրենց մասնակցությունն էին բերել նաեւ դպրոցի մանկավարժական կազմը, հարազատները եւ ընկերները:

Ելույթ ունեցողները նշեցին իրենց սիրելի ուսուցչի 90 տարիների կյանքի հարուստ փորձի, ձեռքբերումների, հայրենիքին ու շրջապատին մատուցած անուրանալի ծառայությունների մասին:

Ցերեկույթի մեկնարկում ներկայացվեց Ժորա Ստեփանյանի հոր՝ Մամիկոն Ստեփանի Խլղաթյանի բազմաշունչ ու բազմավաստակ գերդատանը, որի անդամները հայոց հայրենիքը շենացրել ու կառուցել են կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում՝ մանկավարժության,առողջապահության, արտադրության, գիտության, գյուղատնտեսության ու այլ բնագավառներում:

-Ժորայի հայրը հողագործ Մամիկոն Խլղաթյանն էր, մայրը՝ «Հերոսուհի մայր» կոչմանն արժանացած Վերգուշ Մուկուչի Խլղաթյանը:

Նրանք 1934 թվականին ամուսնացել են, կազմել հայկական ավանդական ամուր ընտանիք: Ունեցել են 11 զավակ՝ 6 դուստր, 5 որդի: Քույրերը եւ եղբայրները միմյանց հետ կապված են հայկական ավանդական ընտանիքին հարիր ազգային արժեքներով: Սերը, միաբանությունը, մեծի եւ փոքրի գիտակցումը, միմյանց սատար կանգնելու պատրաստակամությունը, իրարով ապրելու կարողությունը՝ ահա այն արժեքները, որոնցով դաստիարակվել են նրանք: Բոլորն էլ ամուսնացել են, կազմել գեղեցիկ, ամուր եւ կայուն ընտանիքներ, եւ Մամիկոնի գերդաստանն այսօր ունի 250 թոռ եւ ծոռ:

Սա մի հարստություն է մեր հայրենի աշխարհի համար, որն անկշռելի գանձ է, մի անպարտելի ու հավերժական զորաբանակ, որի երթն անկանգ շարունակվելու է նաեւ հետագա դարերի ընթացքում, շարունակվելու է այնքան, որքան որ կշարունակվի հայ ժողովրդի հարատեւ երթը: Մամիկոն Խլղաթյանի որդիներից վաստակաշատ գյուղատնտես Արշավիր Ստեփանյանն ու իր կին Աղունն ունեցել են 10 զավակ՝ բոլորն էլ բարձրագույն կրթություն ստացած: Ժորա Ստեփանյանն էլ ունեցել է 7 զավակ, որոնցից 4-ը ստացել են բարձրագույն կրթություն,-նշեց Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Անժելա Վարդանյանը:

-Թե՛ հողագործ ու շինական Մամիկոնի եւ թե՛ Վերգուշ մայրիկի համար առաջնային էր զավակների կրթությունն ապահովելը, հիմա դժվար է պատկերացնել , թե այն ժամանակ ինչպիսի ճոխություն էր հետպատերազմյան դժվար տարիներին եւ սուղ հնարավորություններով ապահովել երեխայի կրթությունը, երբ միակ փոխադրամիջոցը մարդու ոտքերն էին: Այդ տարիներին մեր լեռնային գյուղում գործում էր յոթնամյա դպրոց, որտեղ էլ Ժորա Ստեփանյանը ստացել է նախնական կրթությունը: Այնուհետ նա ուսումը շարունակում է Նոր Բայազետի մանկավարժական ուսումնարանում՝ ստանալով տարրական դպրոցի ուսուցչի որակավորում: Ականատեսները պատմում են, որ մայրը տարիներ շարունակ ոտքով, ուտելիքի պարկը շալակին, ուղեւորվել է ուսանող որդու մոտ՝ հաց տանելու: 1957 թվականին, աշխատանքին զուգընթաց, Ժորա Ստեփանյանն ընդունվել է Երեւանի հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը եւ 1963 թվականին բարձր առաջադիմությամբ ավարտել հիշյալ ինսիտուտի լրիվ դասընթացը: Շուրջ 70 տարի նա դասավանդել է ֆիզիկա եւ մաթեմատիկա հարազատ գյուղի միջնակարգ դպրոցում: Իր սաներից շատերը հաղթող են ճանաչվել մաթեմատիկայի օլիմպիադաներում, շատերը այժմ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ճանաչված ուսուցիչներ են, բուհերի առաջատար դասախոսներ, գիտությունների թեկանծուներ, դոցենտներ, հանարպետության առաջնակարգ մասնագետներ: Փորձենք թվարկել այդ աստղաբույլից մի քանիսին. Բեքսիմ Արսենյան, Հենրիկ Միքայելյան, Կորյուն Առաքելյան, Օնիկ Միքայելյան, Լավրենտ Արզումանյան, Վաղինակ Գեւորգյան, Թադեւոս Թադեւոսյան, Հուսիկ Գեւորգյան, Նվեր Գրիգորյան, Նաիրի Վարդանյան, Արշավիր Արշակյան, Ստեփան Հայրապետյան, Կառլեն Աղեկյան, Մանվել Պապիկյան, Նվեր Սաֆարյան, Գոհար Ստեփանյան, Գեւորգ Ոսկանյան, Կոմիտաս Ստեփանյան, Հայկ Ավետիսյան,Վարդան Ստեփանյան, Հասմիկ Ստեփանյան, Ծովինար Ստեփանյան, Շուշան Ստեփանյան եւ շատ շատերը??? Այս պահին այստեղ ներկա է հարազատ եղբայրը՝ Զավեն Խլղաթյանը, ով ճանաչված գիտնական է, գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ,-ներկայացրին հաղորդավարներ Ստելլա Կակոյանը եւ Լուսինե Նազարյանը:

-Ժորա Ստեփանյանի մոտ ներդաշնակ են բնատուր պարգեւները՝ տաղանդը, աշխատասիրությունը, ինքնակրթվելու ձգտումը, համակ նվիրվածությունը աճող սերդին կրթելու եւ դաստիարակելու աստվածահաճո սուրբ գործում:

Այդ ամենով նա դարձավ մեր ժամանակի վառ անհատականություններից մեկը՝ իր բարոյական բարձր նկարագրով, բնատուր շնորհներով ու արդարամտությամբ: Նրա մտահորիզոնը շատ ավելի լայն շրջանակ ունի, քան իր մասնագիտությունն է, քանի որ նրա հետ ժամերով կարելիէ զրուցել գրականությունից, արվեստից, աշխարհագրությունից, պատմությունից, փիլիսոփայությունից... Ու իր անսահման գիտելիքները նա միշտ սիրով փոխանցել է իր աշակերտներին: Որպես մեծ ուսուցիչ՝ նա երանության ու հիացմունքի աննկարագրելի զգացում է ապրում՝ տեսնելով իր նախկին սաների հաջողությունները,-երախտագիտական խոսք հնչեցրեց Ժորա Ստեփանյանի աշակերտ, մաթեմատիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Կորյուն Առաքելյանը:

Ցերեկույթի ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկավ օրվա հերոսը՝ 90 տարին փառքով բոլորած Ժորա Ստեփանյանը.

-Ես հպարտ եմ առաջին հերթին իմ ընտանիքով ու գերդաստանով, երկրորդ հերթին՝ իմ բոլոր այն աշակերտներով, ովքեր այսօր կյանքի ամենատարբեր ոլորտներում զբաղված են հայրենիքի կառուցմամբ ու շենացմամբ: Ամբողջ կյանքում ձգտել եմ թե՛ զավակներիս, թե՛ աշակերտներիս մեջ սեր սերմանել աշխատանքի ու հայրենիքի հանդեպ, ու ինձ դա գերազանցապես հաջողվել է: Առավել հպարտ եմ այն աշակերտներով, ովքեր ոչ միայն լավ են յուրացրել մաթեմատիկան ու ֆիզիկան, այլ նաեւ այսօր դասավանդում են դպրոցներում ու բուհերում: Ես, իրավամբ, գոհ ու երջանիկ եմ իմ վաստակով, բայց դեռ եռանդի մեջ եմ ու քանի դեռ ուժերս կբավարարեն, կշարունակեմ գիտելիքների փոխանցումը մատաղ սերնդին:

Կյանքում ձգտել եմ ամեն դասարան մտնելիս մատաղ սերնդի մոտ սեր արթնացնել դեպի մաթեմատիկան, քանի որ առանց մաթեմատիկայի չի կարող լինել ո՞չ բժշկություն, ո՞չ շինարարություն, ո՞չ արտադրություն, ո՞չ էլ բազմաթիվ այլ բնագավառներ: Հորս եւ սիրելի ուսուցիչներիս եմ պարտական իմ մաթեմատիկական ընդունակությունների համար: Բոլոր առումներով ես ինձ երջանիկ մարդ եմ համարում, թեեւ իմ տարիքին ու ձեռքբերումներին հասել եմ շատ դժվարությունների, մաքառումների, մեծ ջանքերի գնով,-ասաց Ժորա Ստեփանյանը:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Ժորա Ստեփանյանն արժանացել է «Աշխատանքային արիության համար», «Լավագույն աշխատանքի համար» , «ՍՍՀՄ ժողովրդական կրթության գերազանցիկ» մեդալների: 1989 թվականին նրան շնորհվել է «Մեթոդիստ ուսուցիչ» կոչումը: 1996 թվականին ստացել է «Մաթեմատիկայի հետազոտող ուսուցչի» տարակարգ:

Ցերեկույթը գեղարվեստական կատարումներով զարդարեցին Ծովասարի Մշակույթի կենտրոնի «Ալաշկերտ» պարային համույթի անդամները:

Խոսրով Խլղաթյան

ՏՐՎԵԼ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն տրվել է կենտրոնական գրադարանի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկը:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունու կենտրոնական գրադարանի նոր շենքի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 231 միլիոն դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է գրադարանի գործող միահարկ հին շենքի քանդում ու տեղում նոր, երկհարկանի շենքի կառուցում՝ արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմանների ապահովմամբ:

-Մարտունու կենտրոնական գրադարանի հին շենքը կառուցված էր տասնամյակների վաղեմությամբ, մեր ունեցած հարուստ գրքային ֆոնդը՝ շուրջ 80 հազար կտոր արժեքավոր գրքերով, գտնվում էր պահպանության համար ոչ բավարար պայմաններում: Նոր շենք ունենալու հարցը հասունացել էր շատ վաղուց, անգամ դիտարկվում էր մեր կառույցն ու գրքերը այլ շենք տեղափոխելու տարբերակը, սակայն, ի վերջո, ընտրվեց նույն տեղում նոր շենք կառուցելու ծրագիրը: Սա շատ կարեւոր քայլ է՝ մեր հարուստ գրական ֆոնդը պահպանելու, արդի չափորոշիչներին համապատասխան գրադարան ունենալու համար, մի բան, որին մենք երկար տարիներ ենք սպասել,-ներկայացրեց Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն Ռուզաննա Բեգլարյանը:

Մարտունու կենտրոնական գրադարանը ժամանակավորապես կգործի Մարտունի քաղաքի մշակույթի կենտրոնի շենքում:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2027 թվականի ընթացքում:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի հիմնանորոգման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում, որոնք իրականացվել են ՀՀ կառավարության 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Դավիթ Անհաղթ փողոցի հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է 2025 թվականի սեպտեմբերից:

Ծրագրով նախատեսված է եղել մայթերի սալարկման ու ճանապարհի երթեւեկելի մասի ասֆալտապատման աշխատանքներ:

Դավիթ Անհաղթ փողոցի մայթերի սալարկման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 39 միլիոն դրամ, որի 65 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Դավիթ Անհաղթ փողոցում ծրագրի շրջանակներում կառուցվել է երկկողմանի մայթեր՝ բազալտ քարի սալարկմամբ, 387 մետր երկարությամբ եւ 774 քառակուսի մետր մակերեսով:

Դավիթ Անհաղթ փողոցի երթեւեկելի մասի ասֆալտապատման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 42 միլիոն 722 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

«Գեղամա աշխարհ»

13.qxd 21/06/2026 17:53 Page 6

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ԵՎ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԼԳԱ ՔԱՂԱՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համագործակցության նպատակով Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում հյուրընկալվել են Էստոնիայի Հանրապետության Վալգա քաղաքի ուսումնական հաստատության ներկայացուցիչները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Էստոնիայի ներկայացուցիչները հյուրընկալվել են Վարդենիս քաղաքի Բաղեյանի անվան պետական քոլեջում:

Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանն ընդունել է Վարդենիսի Բաղեյան պետական քոլեջի տնօրեն Արթուր Սիրադեղյանին, քոլեջի վարչական աշխատակիցներին եւ Էստոնիայի Հանրապետության Վալգա քաղաքի ուսումնական հաստատության ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են կրթության ոլորտում համագործակցության զարգացման, փորձի փոխանակման, ուսումնական ծրագրերի կատարելագործման եւ միջազգային կապերի ընդլայնմանն առնչվող հարցեր: Կողմերը կարեւորել են կրթական հաստատությունների միջեւ գործընկերային հարաբերությունների ամրապնդումը, ինչը կնպաստի ուսանողների եւ դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Համայնքի ղեկավարը ողջունել է հյուրերին՝ ընդգծելով միջազգային համագործակցության կարեւորությունը կրթության եւ համայնքի զարգացման գործում: Նա պատրաստակամություն է հայտնել՝ աջակցելու կրթական նախաձեռնություններին եւ ծրագրերին, որոնք միտված են երիտասարդների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը:

Հանդիպումն անցել է ջերմ եւ կառուցողական մթնոլորտում՝ նախանշելով հետագա համագործակցության նոր հնարավորությունները:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի երաժշտական դպրոցի սանները Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցի եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ իրագործված ,Քույր դպրոցներե ծրագրի շրջանակում այցելել են Երեւանի Միքայել Միրզոյանի անվան երաժշտական դպրոց:

Սեւանի երաժշտական դպրոցի սաներն այցի շրջանակներում այցելել են Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան: Նրանք սիրով ծանոթացել են կոմպոզիտորի կյանքին եւ գործունեությանը, տպավորվել իրենց տեսածով ու ներկայացված տեղեկատվությամբ: Այնուհետ նրանց ջերմորեն են ընդունել Միքայել Միրզոյանի անվան երաժշտական դպրոցում: Սեւանցի երեխաները հանդես են եկել գեղեցիկ կատարումներով:

-Անչափ կարեւորում ենք նման այցերն ու շփումները մայրաքաղաքի կամ Հայաստանի այլ շրջանների երաժշտական դպրոցների հետ, քանի որ նման հանդիպումները մեր երեխաների համար բացում են հետաքրքրությունների նոր աշխարհ, ճանաչողության նոր շրջանակ, բարեկամուեթյուն հաստատելու նոր հնարավորություններ, ու անշուշտ, նոր բան են ավելացնում նրանց գիտելիքներին:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԵՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱ-2026» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սեւան համայնքում շարունակվում են ԵՄ Կայուն էներգիայի շաբաթվան նվիրված միջոցառումներն ու նախաձեռնությունները՝ «Մաքուր, անվտանգ եւ մրցունակ էներգետիկ միություն» խորագրի ներքո:

Ի թիվս մի շարք մրցույթների, Սեւանի համայնքապետարանի կողմից հայտարարվել էր թեմատիկ լուսանկարչական աշխատանքների մրցույթ, որի եզրափակիչ փուլ է անցել 8 լուսանկար:

Հունիսի 1-ին ամփոփվել են մրցույթի արդյունքները:

Լավագույն 2 լուսանկարները որոշվել են հանձնաժողովի կողմից, 1 լուսանկար՝ հավանումների արդյունքում:

Աշխատանքների գնահատման ընթացքում հանձնաժողովը հաշվի է առել լուսանկարների համապատասխանությունը մրցույթի թեմային, ստեղծագործական գաղափարը եւ գաղափարի ինքնատիպությունը:

Մրցանակային առաջին 3 տեղերը զբաղեցրած մասնակիցներին շնորհվելու են մրցանակներ:

Լավագույն լուսանկարները ներկայացվելու են ազգային մրցանակաբաշխությանը:

Լավագույն եռյակի առաջին հորիզոնականը զբաղեցրել է 8 տարեկան Անահիտ Մկրտչյանի «Գրքի էջերից դեպի ապագա» լուսանկարը, որը ստացել է ամենաշատ հավանումները՝ 198:

Հանձնախմբի կողմից լավագույն եռյակում են Սամվել Գրիգորյան (14 տարեկան) «Արեւի անսպառ ուժի եւ մարդու կողմից այն խելամիտ օգտագործելու մասին» լուսանկարը եւ Մարի Մինասյան (15 տարեկան) «Կայուն զարգացում. մաքուր էներգիա. գյուղական առաջընթացի գումարելիները» լուսանկարը:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգնման նախապատրաստական աշխատանքները մեկնարկը տրված է:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության Պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայությունից տեղեկացրին, որ Գանձակի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգնման նախագծի չափագրման աշխատանքներն իրականացնելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության Պատմական միջավայրի պահպանության ծառայության տնօրեն Արմեն Հովհաննիսյանը, տնօրենի տեղակալ Հայկ Դանիելյանը եւ ճարտարապետ Ամիրան Բադիշյանը աշխատանքային այց են կատարել Գանձակ գյուղ:

Այցի ընթացքում տեղում մանրամասն ուսումնասիրվել է հուշարձանի ներկա վիճակը, քննարկվել են չափագրման եւ նախագծային աշխատանքներին վերաբերող հարցեր:

Ինչպես նշված է Սեդրակ Բարխուդարյանի ,Դիվան հայ վիմագրության կոթղային աշխատության մեջ, թեեւ Գանձակում պահպանված վիմագիր արձանագրությունները մեզ հասել են՝ սկսած 16-րդ դարից, սակայն Սուրբ Գեւորգ եկեղեցին իր ճարտարապետական ոճով եւ շինարարական տեխնիկայով պատկանում է 9-րդ դարի վերջերին կառուցված հուշարձանների խմբին: Այն նախապես ունեցել է գմբեթավոր սրահ, որի փլված կտուրը 19-րդ դարի վերջին Գանձակում վերաբնակված հայերը ծածկել են գերաններով:

Գանձակը միջին դարերում եղել է Ազարյան մելիքական տոհմի նստավայրը:

Եկեղեցու բակում կան գեղաքանդակ խաչքարեր ու տապանաքարեր: Նրա վերականգնումը ոչ միայն կնպաստի հուշարձանի պահպանմանը, այլ նաեւ՝ զբոսաշրջության զարգացմանը:

Խոսրով Խլղաթյան

ԳԱԳԱՐԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 7 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գագարին գյուղում սուբվենցիոն, պետական եւ մասնավոր ներդրումային ծրագրերով 2018-2025 թվականներին սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 7 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 1 միլիարդ 212 միլիոն 442 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 3-ը սուբվենցիոն են՝ 357 միլիոն 712 հազար դրամ ընդհանուր արժեքով, 2-ը՝ պետական՝ 494 միլիոն 730 հազար դրամ արժեքով , 1-ը՝ մեկը համայնքային՝ 12 միլիոն 700 հազար դրամ արժեքով եւ 1-ը՝ մասնավոր ներդրումային ծրագրի սուբսիդավորում՝ 360 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Գագարինում կառուցվել է միջնակարգ դպրոցի մարզադահլիճը, 5470 մետր խմելու ջրատար ցանց, 1065 մետր կոյուղագիծ, 4 հեկտար ջերմատուն, 849 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել ներհամայնքային նշանակության 3000 գծամետր ճանապարհ, 1 բազմաբնակարան շենքի տանիք:

Պետական 2 ծրագրերով կառուցվել է խմելու ջրամատակարարման համակարգը՝ 249 միլիոն 730 հազար դրամ արժեքով, Գագարինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը՝ 245 միլիոն դրամ արժեքով, իսկ մասնավոր ներդրումային ծրագրում ջերմոցային տնտեսության կառուցման համար տրամադրվող պետական սուբսիդիան կազմել է 360 միլիոն դրամ:

«Գեղամա աշխարհ»

13.qxd 21/06/2026 17:53 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱՌԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Ժամանակի հովերը, ինչ խոսք, դիպչել էին Օմակուտին, սակայն դեռեւս չէին թափանցել մինչեւ խորքերը: Այստեղ դեռ ամեն երեւույթ իր անունն ուներ, անցանկալի իրողությունները՝ նույնպես:

Քաղաքից գյուղ եկած Մարոն եւ նրա դուստրերը վատ օրինակ էին գյուղի համար: Ամոթալի էին Մարոյի բաց ծնկները, թփուտի մոտ մորի ծամելը, պարանին ներքնաշորեր փռելը եւ գյուղամիջի անցանկապատ տունը՝ միակ անցանկապատը ամբողջ գյուղում: Ռուստոմը Մարոյից չէր թաքցնում, որ նրան «տեսնելն արդեն մեծ մեղավորություն է», սակայն իրեն գյուղի տերն ու խնամակալն էր համարում. «Հո՜պ,-ասացինք,-ո՜տն արա, իրենց քաղաքում քու էդ ասածը գուցե էին, բայց մեր երկրում են, իմ սահմանը ոտ են դրել՝ իմ ժողովուրդն են ու բերանդ, մանավանդ էս տանը, մաքո՜ւր բացիր»:

Նկատենք նաեւ, որ Ռոստոմն իրեն գյուղի տերը կարծելով՝ առաջնորդվում է ոչ թե փառասիրությամբ կամ մեծամտությամբ, այլ գյուղի հոգսերի ու խնդիրների լուծման օրհասական անհրաժեշտությամբ: Նա իրեն պատասխանատու է համարում գյուղի բնականոն ընթացքի եւ նրա առաջ ծառացած խնդիրների լուծման համար: «Իրականում նրան առաջնորդում, գործունեության է մղում կենսական կայուն դիրքորոշումը, որի հիմքը ոչ թե սեպարատիստական հակումներն են, - գրում է Ս. Փանոսյանը, - այլ խորաթափանց ու սթափ հայացքը, գլոբալ երեւույթների ու դրանց բացասական անդրադարձումների անսխալ ճանաչումը»:

Ռոստոմը ուշադիր է նաեւ գյուղի ծերունիների նկատմամբ: Հաճախ այցելում է Օսեփանց ծերունազարդ պապին, խնամում է հարազատի պես, տալիս է իր կնոջ արդուկած քառածալ թարմ թաշկինակը, չնայած այն բանին, որ ծերունու ամեն օրն այլեւս «կյանք չէ՝ կռիվ է կյանքի դեմ»:

Ռոստոմը, լինելով ազնիվ մարդ, աներում է անազնիվների, անգամ իր եղբայրների նկատմամբ, որոնք «գողին գործակից» մարդիկ են: Նա, «դժբախտ ավերակ» Օմակուտի խնամակալն է, որը սեփական դժբախտության պակաս նույնպես չունի: Ռոստոմն ու իր կինը երկար տարիների համատեղ կյանքում զավակներ չեն ունեցել, սակայն այդքանով հանդերձ, Ռոստոմն իր կողքին չի պահել ապօրինի որդուն, որը հին ու ամոթալի պատմության արգասիք է՝ «սպանված պըտեր ու ծնված չպըտեր»: Օմակուտն է նրա սիրելի զավակն ու որդեգիրը:

Ռոստոմը ամուր կոճղ է անտառի ճանապարհին, մի «գազազած շուն» «Օտար-անհայրենիք թզուկի առաջ... ձեր երեխեքի երկիրը քսան մանեթով ծախում, էգուցվա օրը ձեր ժառանգին հայրենիքից զրկում ու ասում եք՝ երեխեքի առաջ ենք ծառայության կանգնել»: Ռոստոմը համառ ու աննահանջ պայքարի գնով կասեցնում է գերաններով ծանրաբեռ բեռնատարի անտառից հեռանալը եւ, որքան էլ ամոթալի է Մարոյի պես մեկին գյուղում ունենալը, միեւնույն է, վարորդին պարտադրում է՝ փայտը դատարկել Մարոյի անցանկապատ, անայր բակում: Չի մոռանում նաեւ վարորդին հանդիմանել. «էգուց որ քիմգործարանի ծխերում էրեխեքդ խաշվեն ու դրկես Ռոստոմի անտառները՝ մեր քննադատն այ նրանք են լինելու»:

Ռոստոմը ընկերաբար է հաղորդակցվում երեխաների հետ, որոնց մեջ կան նաեւ քաղաքից եկածներ: Նրանցից մեկը նախկին ծմակուտցու որդի է, որի հայրը քաղաքում գեներալի կոչում է ստացել: Տղան կապվում է Ռոստոմի հետ ընկերական սիրով եւ աշխատանքների մեջ հետեւում է նրա օրինակին, իսկ Ռոստոմը խոստովանում է, որ տղայի՝ իր վարքին ու բարոյականությանը հավանություն տալը խորապես հուզել է իրեն: Ռոստոմն ուրախանում է, որ նոր սերունդը ընդօրինակում է իրեն: Պարզվում է նաեւ, որ մանկահասակ տղան գյուղի մասին պատմություններ է լսել իր հորից, ինչը առանձնապես շոյում է Ռոստոմի ինքնասիրությունը: Ռոստոմը լավ է ճանաչել տղայի Մելիք պապին, սակայն տղայի անունը Ֆելիքս է, Մելիք չէ նաեւ նրա եղբայրներից եւ որեւէ մեկի անունը: Տղան հասկանում է իր հաղորդած տեղեկության ծանրությունը եւ ավելացնում. «Գնդապետն իր երեխեքի համար ուրիշ պապ է գտել՝ Ջոնռիդ, Լեոնիդ, Ֆելիքս»:

Հերոսի պայքարի մեկ այլ դրսեւորում ուղղված է գյուղերի միավորման դեմ, որի մասին հրաման են արձակում «վերեւները», իսկ զարգացման հեռանկար ունեցող գյուղերը, «պապերի ջաղացատեղիով» հանդերձ միաձուլվում, կորցնում են իրենց դեմքը եւ բոլոր պատասխանատուներին ազատում հոգսերից: Գնդապետին դուր չեն գալիս գյուղերի բնակիչների ընդդիմադիր հայացքներն այս հարցի առնչությամբ եւ նա կշտամբանքով հորդորում է վերջ տալ Հովիտ, Օմակուտ «տեղական գզվռտոցին»:

Ռոստոմը, ապրելով ամեն օրվա բերած պայքարի բովում, գիտակցում է իր իսկական արժեքը եւ «փառք է» համարում «համատարած գողության ու էն մյուսի մեջ» իր դիրքերում ամուր մնալը: Ռոստոմի ծանրակշիռ հանգամանքը գիտակցում եւ խոստովանում է նաեւ նրա հակառակորդ թզուկը՝ «իրա նման տասը տղա լիներ՝ Ղարսը հիմա մերն էր»:

Տերը, որի հաղթանակը Մաթեւոսյանը փափագում էր ի խորոց սրտի, պարտվում է: Գյուղը ժամանակի ընթացքում համակերպվում է նոր ,խազեինիե գոյության եւ նրա՝ գյուղի ,ջաղացին ու ծառինե տեր կանգնելու նախաձեռնության հետ: Գյուղական պարզամտությամբ այդ բանի հետ համաձայնում են նաեւ Ռոստոմի քույր Շուշանը եւ վերջինիս որդին, իսկ Ռոստոմի մեջ պայքարող անհաշտ ու աննահանջ Տերը անզոր է այլեւս ինչ-որ բան փոխել: Այդ է պատճառը, որ վերջին տպավորիչ վրձնահարվածներով Մաթեւոսյանը նկարագրում է գյուղի ժողովրդական զանգվածը կատաղի ուժով ճեղքող, խորոված ի շշերը շրջող, հյուրասիրությունը գետնող Ռոստոմին: Գյուղի հնազանդությունը բավական չէ, մյուս կողմից էլ պառավի խայթոցն է նրա հոգին ալեկոծում՝ «քո հերը քեզ անտառից է գտել, դու դեն գցած ես եղել»: Թզուկը իր հյուրասիրությունը տապալողի առաջն առնելու համար ոչինչ չի ձեռնարկում, իսկ մյուսներին հորդորում է՝ «թողեք տրորի, հանգստանա»: Ռոստոմի վրա առանձին տպավորություն է գործում ամբոխի մեջ գտնվող իր ապօրինի որդին. հոր հարձակմանը ենթարկվելիս նա ոչ միայն չի վախենում, այլեւ կռվողի հոգեբանությամբ ընդդիմանում, առաջ է մղվում:

Գյուղը նստում է հացի: Մի բուռ մնացած, մաղված, տնտեսություն առ տնտեսություն կողպված Օմակուտը կուլ է գնում «վերեւներին»: Իրադարձություններին ականատես երեխաները չեն մոտենում այն հյուրասիրությանը,

որը, որոշ հանդարտությունից հետո, առաջարկվում է իրենց: Գուցե թե հարազատ պապերի թողած անտառի, ջրաղացի, այգու, գոմի, հիշողության, երազանքի, հնավանդի, արժեքավորի, երկրի, անտառի ու որբության Տերը պարտվում է, սակայն նրա ազնիվ եւ նվիրված աշխատանքին հետեւող երեխաները՝ նոր սերունդը, թիկունք է դարձնում դեպի օտար, ապօրինի տերերը:

Օմակուտի ավանդապահ բնակիչները («Տաշքենդ»)

Մաթեւոսյանի ստեղծագործությունները ինքնատիպ լինելուց զատ՝ խորն են, ուղղված են հարցի ներքին ոլորտներին: Այս հատկանիշը բնորոշ է հատկապես «Տաշքենդ» վիպակին:

Ընտանիքի ամրությունը, սերը, ջերմությունը, խոհեմությունը, փոխըմբռնումը Մաթեւոսյանի երկերում մշտապես արծարծվող գաղափարներից են: Այդ գաղափարները դարերի, հազարամյակների ծնունդն են, որոնց կորուստը նշանակում է բարոյականության կորուստ: Մաթեւոսյանի երկերում ակնածանքի ու գնահատանքի առարկաներ են հայկական ընտանիքի համակեցության սրբազան դարձած ձեւերը: Գրողն իր շատ երկերում ցավ ու ափսոսանք է ապրում այս արժեքների կորստի համար: «Տաշքենդ» վիպակում այս մասին խոսվում է ամենասկզբից:

Վիպակը սկսվում է այն հերոսների մասին պատմություններով, ովքեր մարդկության պատմության բարձր արժեքներից մեկի՝ բարոյական նորմերի պահապաններն են: Նրանց բարոյականությունը ժառանգվել է իրենց ավագներից, իսկ իրենք ավանդելու են իրենց կրտսերներին:

«Տաշքենդ»-ում բարոյականության կրողներից մեկը Ջանդառն է: Նրա տունդարձն ու շտապողական գործողությունները՝ նվերներ բաժանելը, ,որձե գառ մորթելը, մեծ խանդավառությունը, սկզբում կարող են անտեղի կամ անհասցե թվալ, սակայն չեն կարող չնպատակադրված համարվել: Ջանդառը, իր տնից եւ ընտանիքից հեռու գտնվելով, խոտհարքի ժամանակ, անբացատրելի կերպով կանխազգացել է ընտանիքի հետ տեղի ունեցող անախորժությունը. նորատի հարսը ոչխարները տարել է արածեցնելու եւ դրանցից քսանհինգը գողացել են: Ջանդառը գերանդին թողել եւ ճամփա է ընկել՝ որոնելու կորուստը: Բաճկոնի գրպանում ընդամենը երեք ռուբլի է ունեցել, թե երբվանից եւ թե ինչպես մնացած՝ չի հիշել, առանց սննդի, այդպես անպատրաստ, Կեչուտով ու Ղազախով, Երեւան-Թբիլիսի ավտոբուսով, մի մասը՝ ոտքով, մի մասը՝ ձիով, Հայ-Թուրքական Ոսկեպարներով անցել է ու գտել կորուստը, ապա չորքոտանիներին տեղավորել է մի բեռնատարի մեջ եւ վերադարձրել տուն: Թեեւ գնացել է անպատրաստ, սակայն վերադարձել է պատրաստված եւ կարոտած:

Առավոտ կանուխ, երբ գյուղը դեռ ամբողջությամբ չի արթնացել, նա կորուստը եւ դեռ ավելին վերադարձրած: Ջանդառը կնոջ՝ Սոփըկի եւ նորահարսի համար ծաղկավոր շալեր է բերել, Թեւանի համար՝ ծալովի դանակ ու ռադիոյի լիցքեր, Թեւանի երեխայի համար՝ մի մեծ կտոր հալվա, գրպանի խակ զկեռները նույնպես Սոփըկին է տվել եւ երեք օրվա իր ունեցած ուտելիքը նույնպես խակ զկեռ է եղել, որ բկին է մնացել:

Որքան էլ տարօրինակ հնչի՝ Ջանդառի ընտանիքի պատմությունը դասական ընտանիքի պատմություն չէ: Իհարկե, բազմաթիվ ընդհանրություններ ու զուգահեռներ կարելի է գտնել այս եւ Օմակուտյան այլ ընտանիքների միջեւ, սակայն Ջանդառը փոքր-ինչ այլ աչքով է նայում ընտանիք հասկացությանը: Նա, ոչխարները գտնելու համար օրեր շարունակ չարչարվել է, սակայն գործը հաջողելուց հետո ամեն բան անում է, որպեսզի նորահարսը անգամ չկռահի, թե կենդանիներն անհետացել են իր առջեւից: Դրա հետ մեկտեղ Ջանդառի տունդարձը կարոտած, ոգեւորությամբ, ընտանիքի հանդեպ երախտագիտությամբ լի վերադարձ է: Գտնված ոչխարներից մի որձ մորթելով հարազատներին հենց այս մասին է ակնարկում: «Սա մի աշխարհ է, - նկատում է Վ. Գրիգորյանը, - որտեղ մարդիկ հարգում են միմյանց, ուշադիր են ու դրա դիմաց ոչինչ չեն պահանջում. դա նրանց բնական վիճակն է»:

Բնական ընթացքից չշեղվելու համար Թեւիկը չի շտապում շնորհակալություն հայտնել Ջանդառին, քանի որ այս մարդկանց համար վերջինիս սերը, ջերմությունը չտեսնված, նորահայտ մի բան չէ, քանի որ շնորհակալությունը կարող է ճիշտ չընկալվել այս միջավայրում եւ օտարել Թեւիկին հարազատների շրջանակից:

Ջանդառի ակտիվությունը փոխանցվում է նաեւ ուրիշներին, ամենքն անցնում են իրենց գործերին, բայց ուրախությունը աստիճանաբար տեղի է տալիս. «Ջանդառի աչքերը լցվեցին, Ջանդառս օրիորդի պես լաց եղավ»: Սա իր պատճառն ունի: Ջանդառն, ինչպես ասացինք, ճանապարհի կեսը ձիով է անցել, ձին ծմակուտցի Սիմոնինն է եղել, սակայն Ջանդառը ստիպված է եղել արձակել կենդանուն՝ չիմանալով նրա հետագա ճակատագիրը: Հոգու խորքում հույս է տածել, որ ձին ճանապարհը կհիշի, ինքնուրույն դուրս կգա ձորից եւ կհասնի իր տիրոջը: «Ձին, հասկանում ենք, ամեն տեղ ձի է (Ղազախի ու Կենտրոնի մորթարանները մոռանանք), բայց մեր սիրտը մի քիչ թուլանում է՝ երբ մեր Օմակուտի ձիերին, տղերքին, գնացած աղջիկներին, վաճառված կովերին, աստծու գառներին պատկերացնում ենք օտարության մեջ, կարծում ենք նրանք բոլորն էլ մեզ նման կարոտ ու տխրություն ունեն, օտար իրիկվա մեջ կանգնում են ու լացները գալիս է»: Ձին իսկապես դուրս է եկել ձորից, գնացել ու հասել է իր տիրոջը, ինչը Ջանդառը գնահատում է իրեն հոգեհարազատ տեսանկյունից՝ ,հայրենիքն ուրեմն քաշե՛լ, էն ձորից հանել էե: Ջանդառի մտահոգությունն առհասարակ մեծ է այն ամենի շուրջ, ինչը Օմակուտինն է, հայրենական է, սրտամոտ է:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Չարենցի փողոցում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն ավարտվել են հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, ծրագրի շրջանակներում ասֆալտապատվել է փողոցի երթեւեկելի մասը, 435 գծամետր երկարությամբ կառուցվել ու սալարկվել երկկողմանի մայթերը:

Չարենցի փողոցի մայթերի կառուցման ու սալարկման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 27 միլիոն դրամ, որի 65 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունիի համայնքապետարանը:



Չարենցի փողոցի երթեւեկելի մասի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 42 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունիի համայնքապետարանը: Երկկողմանի մայթերը կառուցվել են շուրջ 1087 քմ մակերեսով, իսկ ճանապարհի երթեւեկելի մասն ասֆալտապատվել է 435 գծամետր երկարությամբ եւ շուրջ 3045 քմ մակերեսով: Տեղադրվել է նաեւ միակողմանի ջրահեռացման համակարգ:

Ծրագրի իրականացման արդյունքում Մարտունի քաղաքի Չարենցի փողոցի բնակիչներն արդեն օգտվում են ժամանակակից, բարեկարգ, ասֆալտապատ ճանապարհից ու սալարկված մայթերից:

«Գեղամա աշխարհ»

13.qxd 21/06/2026 17:53 Page 8

ԱՎԵԼԻ ՄՈՏ ՔԵԶ

-Ի՞նչ էր սերը ինձ համար: Էր... Մարդու հոգին, բառերի տեսքով դեռ ոչ մի բացատրություն չի տվել թե ինչ է սերը: Բոլորը գիտեն թե դա ինչ է, բայց ոչ բոլորն են զգացել: Շատ բարձեր են զգացել սերը... Շատ հիվանդանոցների պատեր են զգացել սերը...Շատ գերեզմանաքարեր են զգացել սիրո կարոտը:

-Դու որտեղի՞ց գիտես այս մասին մամ, սրա մասին չպետք է խոսի մարդ,ով ունի հիասքանչ ամուսին:

-Հիմա ես ամուսնացած եմ,բայց կյանքում ամեն ինչ այդքան հեշտ տեղի չի ունենում, ապրեցի, մի ողջ կյանքում ունեցա բազում հարցեր, երազանքներ, նպատակներ,փորձություններ,երջանիկ պահեր եվ երջանիկ պահերի կարոտ:Ավելի լավ է ես քեզ պատմեմ իմ առաջին սիրո պատմությունը, որը ինձ շատ բան սովորեցրեց:

Այսպես մի օր,երբ խարույկի դիմաց մայր ու աղջիկ նստած էին, մայրը որոշեց պատմել նրան մի պատմություն, որը ապրում էր նրա սրտում...

Ո՞վ էր նա: Իմ հոգին... Իմ շունչն ու իմ երազանքը: Իսկ ո՞վ էի ես: Իմ կարծիքով մի լճակ, նրա համար մի օվկիանոս: Նա հաճախ ասում էր «թող բոլորը մտածեն, որ դու բարդ մարդ ես : Օվկիանոսը երբեք ներողություն չի խնդրում իր խորության համար»: Էմիրը ազգությամբ թուրք էր, ես հայ, նրա միջոցով ես հասկացա, որ միշտ չէ թշնամին թշնամի, կամ ընկերը ընկեր: Սկսեմ ամենասկզբից:

Ես դեռ շատ փոքր էի, երբ մեր գյուղում սկսվեց պատերազմ, այդ օրը ես երբեք չեմ մոռանա, ավելի ճիշտ այդ տեսարանը, բոլորը փախչում էին... ցավ եմ ապրում այդ ամենը հիշելով: Մեր հայրենիքը մեր մայրն է եվ միգուցե այն ուրախ կլինի, եթե մենք մահից փրկվենք, բայց որքան հպարտ կլինի երբ տեսնի, որ ծնել է քաջ որդիներ, որդիներ, ովքեր մինչեւ վերջ իր մոր ձեռքը բռնեցին, որդիներ, ովքեր մորը մեռնելուց չթողեցին...Այդ օրը մենք տեղափոխվեցինք նոր քաղաք, ամեն օր ես տեսնում էի դեմքեր, որոնք պատերազմ չեն տեսել, չեն զգացել «վերջ»-ի վախը: Ու ես որոշեցի դառնալ զինվոր, որպեսզի ուրիշները մնան անտեղի պատերազմի մասին: Իհարկե ես աղջիկ էի , բարդ էր լինելու, սակայն նոր ծնված երազանքը ես կոտրել անկարող էի:

Ես ավարտեցի ուսումս՝ կարծես փակելով մի դուռ, որի հետեւում մնաց մանկությունս: Բայց այդ դռան ճեղքերից դեռ ներս էր սողում հիշողությունների փոշին՝ նույն ձայները, նույն վախը, նույն անհասկանալի ծանրությունը: Շուտով հագա զինվորի համազգեստը. այն ծանր էր ոչ թե կտորից, այլ պատասխանատվությունից:

Տարիները անցան: Ձեռքերս սովորեցին զենքի լեզուն, աչքերս՝ վտանգը կարդալ առանց բառերի: Ես այլեւս այն աղջիկը չէի, որ մի ժամանակ հեռվից էր լսում պայթյունների արձագանքը: Ես դարձել էի վարպետ՝ ոչ թե միայն կրակելու, այլ ապրելու այդ խավարի մեջ:

Եվ ահա՝ պատերազմը նորից վերադարձավ:

Նույն հոտը օդում:Նույն մոխրագույն երկինքը:Նույն սառնությունը մարդկանց հայացքներում:Կարծես ժամանակը փակ շրջան լիներ, եւ ես քայլում էի նույն տեղերով, բայց այլ կերպ:Ես օգնեցի ժողովրդին՝ դուրս բերելով նրանց կրակի միջից, ձեռքերը բռնելով, երբ հողը փլվում էր ոտքերի տակ: Բայց միեւնույն ժամանակ իմ ներսում մի ուրիշ բան էր աշխատում՝ սառը, ճշգրիտ, անխափան: Ես շարժվում էի առաջ, խոցում թշնամուն՝ առանց ավելորդ մտքի: Աջ ու ձախ՝ աղաղակներ, փոշի, արյան բույր, որ խառնվում էր վառվող փայտի հոտին: Մի պահ՝ նշան բռնեցի:

Փամփուշտը կտրվեց լռությունից եւ հասավ իր հասցեին:

Նա ընկավ, բայց չմնաց տեղում: Սողոսկեց մոտակա տներից մեկի ներսը՝ կարծես վերջին հույսը բռնելով պատերի մեջ: Ես կանգ չառա:

Դռան առաջ մի պահ լռեցի:

Արտաքին աղմուկը կարծես մարեց, եւ մնաց միայն իմ շնչառությունը՝ ծանր:

Ես ներս մտա:Ես տեսա նրա հայացքը: Վախ կար այնտեղ՝ մաքուր, անպաշտպան, այնպիսի, ինչպիսին լինում է մարդու աչքերում, երբ նա կանգնած է եզրին: Բայց այդ վախի խորքում ես հանկարծ նկատեցի մի բան, որ ինձ կանգնեցրեց. կյանք: Նույն կյանքը, ինչ իմ մեջ էր:

Ձեռքս ծանրացավ զենքի վրա:Մի պահ հասկացա՝ նա էլ ինչ-որ մեկի համար տուն է, հենարան, սպասված վերադարձ: Եվ այդ պահին իմ բոլոր երազանքները, որոնք կարծես փայլում էին հերոսության լույսով, ուրիշների համար վերածվեցին թախծի, կորստի, դատարկության:

Ես չկարողացա:

Մտքերս բախվում էին իրար, ինչպես կրակոցները՝ դրսում: ,Ի՞նչ տարբերություն կա մեր միջեւ, եթե հիմա սպանեմ նրան...ե

Ես իջեցրի զենքը:

Մոտեցա: Առաջին օգնություն ցույց տվեցի՝ ձեռքերով արագ, բայց ներսում՝ ծանր: Նրա շունչը խզվող էր, բայց դեռ կար: Ժեստերով հասկացրի՝ սպասել ինձ, չշարժվել: Նա գլխով թույլ նշան տվեց: Մոտ իմ տարիքին էր՝ նույնքան երիտասարդ, նույնքան վաղ ընկած այս մղձավանջի մեջ:

Ես դուրս եկա, դուռը փակեցի, կարծես փակելով այդ պահը աշխարհից:

Եվ վերադարձա դեպի աղմուկը՝ դեպի մարդիկ, որոնց պետք էր օգնել:

Այո, ես հմուտ զինվոր էի դարձել:

Բայց այդ օրը հասկացա՝ կյանքը պաշտպանելը ավելի դժվար է, քան կյանք կործանելը:

Երբ ամեն ինչ մի փոքր հանդարտվեց, ես վերադարձա նույն տունը:

Ժամանակը շատ չէր անցել, բայց թվում էր՝ մի ամբողջ կյանք:

Նա դեռ կենդանի էր:

Ես նրան գաղտնի տեղափոխեցի, տարա այնտեղ, որտեղ աչքեր քիչ էին, հարցերը՝ ավելի քիչ: Հետո՝ ապահով ճանապարհով՝ հիվանդանոց: Նամակներ թողեցի՝ լուռ, առանց անունի, միայն խնդրանքով ու գումարով. «օգնեք նրան»: Ժեստերով նրան հասկացրի՝ լռել, ոչինչ չասել:

Մի ամիս անց, արձակուրդի ընթացքում, ես վերադարձա:

Նա ապաքինվել էր:

Հասցեն գտնելը դժվար չէր: Երբ մոտեցա, դուռը բացեց ինքը: Մի պահ երկուսս էլ լռեցինք: Ժամանակը կարծես կանգ առավ, ինչպես այն օրը՝ դռան առաջ:

Նրա աչքերում այլեւս վախ չկար:

Փոխարենը՝ մի բան, որ ավելի բարդ էր հասկանալ:Նա հասկացավ: Ես էլ հասկացա:

Մենք խոսքեր չունեինք՝ լեզուներն ուրիշ էին, բայց լռությունը մեզ համար դարձավ կամուրջ: Նա ձեռքը տարավ սրտին, ապա՝ թեթեւ խոնարհվեց: Ես նույնը արեցի:

Այդ պահին պատերազմը կարծես հեռացավ:

Մնացինք մենք՝ երկու մարդ, որոնք կարող էին լինել թշնամի... բայց ... բայց...

Նա ներս հրավիրեց: Ես մի պահ տատանվեցի, հետո անցա շեմը: Տունը խաղաղ էր, պատուհանից լույս էր թափվում հատակին: Սեղանի վրա դրված էր թեյ: Նա ցույց տվեց՝ նստեմ: Սովորել էր մի փոքր հայերեն, աշխատում էր, հավաքում էր գումար, որպեսզի վերադառնար հայրենիք...Երիտասարդի անունը էմիր էր: Այդ անունը սկզբում պարզապես հնչյուն էր՝ մի մարդ, ում ես փրկել էի, ում թողել էի կենդանի մնալու իրավունքը: Բայց ժամանակի ընթացքում այդ հնչյունը դարձավ դեմք, հետո՝ հայացք, հետո՝ մի ամբողջ աշխարհ, որտեղ ես սկսեցի վերադառնալ ամեն անգամ, երբ պատերազմը լռում էր:

Մենք ընկերացանք: Սկզբում՝ զգուշությամբ, լռությունների մեջ կառուցված խոսքերով: Հետո՝ ավելի ազատ, ավելի մարդկային: Այդ ընկերությունը, որը ծնվել էր ցավի ու պատահականության միջից, տարիների ընթացքում դարձավ մի բան, որ ես այլեւս չէի կարող անուն տալ միայն ,ընկերություն բառով:Այդ շփումների մեջ ամեն որպե ուներ իր լույսը, իմաստը: Կարծես ժամանակը դանդաղել էր մեր շուրջը, որպեսզի մենք հասցնենք զգալ այն, ինչ սովորաբար մարդիկ կորցնում են վազքի մեջ:Ես լցվեցի նրա հանդեպ սիրով՝ խոր, լուռ, աննկատ աճող սիրով, որը չի աղմկում, բայց ներսում փոխում է ամեն ինչ:

Եվ տարիներ անց՝ էմիրը հիվանդացավ:

Սկզբում ոչ ոք չէր ուզում հավատալ, որ դա կապված է անցյալի հետ: Բայց հետո պարզվեց՝ այն վերքը, որը ես ժամանակին թողել էի նրա մարմնում, իր հետքը թողել էր տարիների խորքում:

Մեկ շաբաթ անց պետք է օպերացիա լիներ:Օպերացիա, որի ձախողումը նշանակում էր վերջ:Ես էի դոնորը լինելու:

Եվ հենց նույն օրը՝ սահմաններից եկավ լուր. թշնամիների հարձակում:

Ես կանգնած էի երկու աշխարհի միջեւ:

Մի կողմում՝ մարտադաշտը, որտեղ իմ ներկայությունը պարտադիր էր:

Մյուս կողմում՝ հիվանդանոցը, որտեղ մի մարդ սպասում էր, եւ որտեղ իմ արյունը կարող էր նշանակել նրա կյանքը:

Ես պետք է հասնեի ժամանակին:

Ես պարտավոր էի:

Հասկացա՝ եթե դոնոր չլինի հիմա, հետո կարող է արդեն ուշ լինել՝ չափազանց ուշ:

Բայց նաեւ գիտեի՝ եթե չգնամ, այնտեղ կմեռնեն ուրիշներ:

Ես շարժվեցի դեպի մարտադաշտ, դեպի կրակոցներ:

Մարիաննա Խաչիկյան
Գավառի Ավ Իսահակյանի անվան
թիվ 4 միջնակարգ դպրոց,
8-րդ դասարան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՀԱՐՍՏԱՑԵԼ ԵՆ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐՈՎ

Մարտունի համայնքի 17 բնակավայրերում ավարտվել են 2026 թվականի ծառատնկման միջոցառումները, որոնց մեկնարկը տրվել էր մայիս ամսից:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունի քաղաքում, Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ, Ջոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն, Գեղհովիտ, Մադինա, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Լիճք, Ծակքար, Ծովասար, Ձորագյուղ, Վարդաձոր եւ Երանոս գյուղերում գործող համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններին եւ վարչական կենտրոններին են բաշխվել 1.213 սոճենու, 1.103 ուռենու եւ 764 հացենու տնկիներ:

-Ընդհանուր առմամբ, Մարտունի համայնքի բնությունը հարստացել է 3080 նոր տնկիներով: Դրանք հիմնականում տնկվել են վարչական գրասենյակների, կրթական ու ատժառողջապահական հիմնարկների բակերում, հուշարձանների տարածքներում եւ խնամվում են համապատասխան կառույցների կողմից,- նշեցին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ԱՐՓՈՒՆՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 7 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 7 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 425 միլիոն 957 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 6-ը սուբվենցիոն են՝ 174 միլիոն 699 հազար դրամ ընդհանուր արժեքով, 1-ը՝ պետական՝ 1 միլիարդ 251 միլիոն 258 հազար դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Արփունքում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 6875 մետր խմելու, 3000 մետր ոռոգման ներքին ու արտաքին ջրատար ցանցեր, 3640 մետր արտաքին լուսավորության ցանց, ընթացքի մեջ է արդի չափորոշիչներին համապատասխան 144 տեղանոց կրթահամալիրի կառուցումը:

Արփունքի կրթահամալիրը կառուցվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, պետբյուջեի միջոցներով, 1 միլիարդ 251 միլիոն 258 հազար դրամ պայմանագրային արժեքով: Կրթահամալիրի կազմում կլինի նաեւ 80 տեղանոց մանկապարտեզի շենքը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մարտ ամսից եւ կավարտվեն 2027 թվականի փետրվարին: Շինարարական աշխատանքները 2026 թվականի հունիսի 10-ի դրությամբ իրականացվել են շուրջ 60 տոկոսով:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 19. 06. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: